Բէոյիւք-Վեղիի և Շարուր-Նախիջևանի դէպքերը մեծ յուզում առաջ բերին Երևանում և Հայաստանի բոլոր կողմերում։ Կառավարութիւնը ձեռք առաւ արտակարգ միջոցներ։ Յուլ. 23-ին Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գաւառներում յայտարարուեց 26, 27 և 28 տարեկանների զօրակոչ (օգ. 18-ին այս որոշումը տարածուեց ամբողջ Հայաստանի վրա)։ Յուլ. 24-ին մտցուեց մահապատիժ պետական դաւաճանութեան և դասալքութեան համար։ Նոյն օրը որոշուեց ազգաբնակութիւնից հարկադրական միջոցներով զէնք ու ռազմամթերք հաւաքել և սահմանել զինային պարտադիր տուրք։ Յուլ. 25-ին հաստատուեց զինաժողովի կոմիսարի պաշտօնը և Աբշ. Ջամալեանը նշանակուեց զինաժողովի կոմիսար։ Յուլ. 28-ին զէնքի տակ առնուեցին մինչև 40 տարեկան բոլոր սպաները։ Յուլ. 30-ին կազմուեց երեք հոգինոց Ապահովութեան Կոմիտէ՝ վարչապետից և ներքին գործոց ու զինուորական նախարարներից։ Ապահ. Կոմիտէն պիտի վարէր երկրի պաշտպանութեան գործը՝ լիազօրութիւն ունենալով դիմելու արտակարգ միջոցների նոյնիսկ առանց նախարարական խորհրդի որոշման։

Այս միջոցներն ինքնին բաւական են տեսնելու համար, թէ ի՞նչ վտանգաւոր կացութիւն էր ստեղծուել Հայաստանում։ Կառավարութիւնն ու ժողովուրդը զգում էին, որ միայն իրենցից է կախուած փրկութիւնը և լարում իրենց բոլոր ուժերը։ Կառավարութեան կոչի վրա, մի քանի օրուայ մէջ, Երևանի բնակչութիւնը մեծ քանակութեամբ փամփուշտ ու հրացան յանձնեց զինուորական իշխանութիւններին։ Ժողովուրդը իր տրամադրութիւնն արտայայտում էր բազմաթիւ ժողովներով ու բանաձևերով։

Կառավարութիւնը դիմեց և դաշնակիցներին՝ զինուորական աջակցութիւն հասցնելու խնդրանքով։

Յուլ. 26-ին Երևան հասան անգլիական ու ֆրանսական հրամանատարութեան ներկայացուցիչները մի քանի հարիւր հնդիկ զինուորների հետ, և օգոստ. 2-ին հանդիպում ունեցան ապստամբների ղեկ Խալիլ բէյի հետ, որը յայտարարեց, թէ եղածը ապստամբութիւն չէ բնաւ, այլ ազգային իրաւունքների պաշտպանութիւն։ Շարուր—Նախիջևանի թրքութիւնը մինչև Փարիզի Վեհաժողովի վերջնական վճիռը, ուզում է կառավարուել սեփական ազգային խորհրդով, ինչպէս Ղարաբաղը կառավարւում է հայկական ազգային խորհրդով։

Անգլիական ու ֆրանսական սպաների փորձերը ո՛չ մի արդիւնք չտուին։ Այդ պատճառով, օգ. 10-ի առաւօտեան, հայկական զօրքերը դիմեցին նոր յարձակման Բէոյիւք-Վեղիի վրա և մի շարք յաջող ընդհարումներից յետոյ, երեկոյեան դէմ գրաւեցին Բէոյիւք-Վեղիից 2 վերստ հեռու գտնուող Կոթուղի բարձունքները և Գիլա, Շիրազլու, Կարալար, Ջաթղուան և Ռեհանլու գիւղերը։ Թուրքերը դիմադրում էին կատաղի կերպով, ռազմագիտական արհեստով փորուած դիրքերից, հրացանների ու գնդացիրների սպանիչ կրակով։ Մի քանի օր տևեցին արիւնահեղ կռիւներ, որոնց ամբողջ երկիրը լարած հետևում էր։ Ամենքը զգում էին, որ պարտութիւնը Բէոյիւք-Վեղիի տակ ճակատագրական հետևանքներ կունենար Հայաստանի համար։